

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՋԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ 1-Ի ԿԻՍԱՄՅԱԿԻ

2012 թվականի 1-ի կիսամյակի ընթացքում ստացվել են 45 դիմում բողոքներ: Քննարկվել են բոլոր դիմում բողոքները և տրվել են պատասխաններ:

Քաղաքացիների ընդունելությունների թիվը կազմում է 153 մարդ:

Ստացվել են 42 պաշտոնական գրություններ, որոնք քննարկվել և տրվել են պատասխաններ:

Նախապատրաստվել և տարբեր կազմակերպություններին են ուղարկվել 70 պաշտոնական գրություններ:

Անցկացվել է ավագանու 3 նիստ, որոնք արձանագրվել և վավերացվել են ավագանու անդամների կողմից:

Արձանագրվել է համայնքի ղեկավարի 2 կարգադրություն:

Կայացել է համայնքի ղեկավարի 68 որոշում:

Համայնքի անդամների 45 դիմում բողոքների հիման վրա կատարվել է 20

հողամասերի չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ, 12 դիմումներ՝ պտղատու և խաղողի այգիների հիմնման աշխատանքների ակտավորման գործընթացի համար, իսկ մնացած 13 դիմումները քննարկվել և տրվել է կոնկրետ պատասխաններ:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անցկացվել է երիտասարդական, հայրենասիրական և այլ տեսակի միջոցառումներ:

Փետրվար ամսին 103 դպրոցահասակ երեխաների տրվել է համալիրի տոմսեր:

Փետրվարի սկզբին գյուղապետարանի շենքում կազմակերպվել և անցկացվել է շախմատի ավանդական մրցաշար՝ նվիրված Արցախյան ազատամարտին նվիրված Ջանֆիդայի զոհված ազատամարտիկների հիշատակին:

Մրցաշարում հաղթող 4 շախմատիստներ պարգևատրվել են նվերներով, իսկ 10 զոհված ազատամարտիկների հարազատներին՝ նվերներ և դրամական պարգևներ, որից հետո զոհված ազատամարտիկների հիշատակին տրվել է ճաշկերույթ 50 համայնքի անդամների համար: Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ դպրոցի, առողջության կենտրոնի և գյուղապետարանի շուրջ 75 կանանց տրվել են ծաղիկներ և նվերներ:

Մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի օրվան, որի ժամանակ ծաղկեպսակներ և թարմ ծաղիկներ են դրվել զոհված մարտիկների հուշարձանին, իսկ պատերազմի վետերաններին տրվել են դրամական պարգևներ և կազմակերպվել է ճաշկերույթ:

Մայիսի 28-ին ռուսական սահմանապահ զորքերի օրվան նվիրված տոնակատարության համար նվերներ և դրամական պարգևներ են տրվել ուղեկալի անձնակազմին:

Մայիսի 28-ին Սարդարապատի հերոսամարտի հաղթանակին նվիրված միջոցառում է կազմակերպվել Սարդարապատի հուշահամալիրում և ճոխ սեղան է զգվել հյուրերի համար:

Ամիսը 2 անգամ կատարվում է փողոցների աղբահանություն գյուղապետարանի միջոցների հաշվին:

Կատարվել են խմելու ջրի վարակազերծում և ժամանակին կատարվում է ջրամատակարարման աշխատանքները / ծմռան ամիսներին օրական 2 անգամ 2-3 ժամ, իսկ մնացած ամիսներին օրական 2 անգամ 4-6 ժամ/:

Կատարվել են համայնքի փողոցների և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման և ավազապատման աշխատանքներ:

Համայնքում գործում են 1 միջնակարգ դպրոց, 1 առողջության կենտրոն և 1 մանկապարտեզ:

Առողջության կենտրոնում գրանցված բնակչության թիվը կազմում է 2455 բնակիչ:

Հաճախումների թիվը կազմել է 1163 մարդ, որից մեծեր՝ 763, փոքրեր՝ 400:

Գրանցվել է 153 տնային կանչեր, որից մեծեր՝ 116, իսկ փոքրեր՝ 37:
Պրոֆիլակտիկ նպատակով սպասարկվել է 421 մարդ, որից մեծեր՝ 146, միջին
դպրոցահասակներ՝ 275:

Նեղ մասնագետների կոնսուլտացիա ստացել են 612 հիվանդներ:

Առողջության կենտրոնը գործում է որպես ընտանեկան, որտեղ իրականացվում է
ընտանեկան բժշկություն:

«Վազգեն Սարգսյանի» անվան մանկապարտեզը գործում է ապրիլի 1-ից մինչև
հոկտեմբերի 31-ը 3 խմբով, հաճախում ցուցակային 88 երեխա:

Կազմվել է նախագիծ 2012 թվականին Ջանֆիդա գյուղը 100 տոկոսով
գազաֆիկացնելու համար:

Ջանֆիդա գյուղական համայնքում լավ վիճակում չի գտնվում սեփական եկամուտների
հավաքագրման աշխատանքները, որը իր բացասական հետքն է թողնում համայնքում
կատարվող բոլոր աշխատանքների և միջոցառումների վրա:

Եկամուտները 2012 թվականի 1-ի կիսամյակ

1. Հողի հարկի - 1918.0 հազ. դրամ
2. Գույքահարկ - 1170.0 հազ. դրամ
3. Վարձակալված հողի վճար - 144.0 հազ. դրամ
4. Դոտացիա - 15286.0 հազ. դրամ

Ընդամենը - կիսամյակային բյուջեն կատարվել է 95.4 %

Ծախսեր

1. Աշխատավարձ - 7348.0 հազ. դրամ
2. Սոց վճար - 1087.0 հազ. դրամ
3. Սուբսիդիա - 281.0 հազ. դրամ
4. Սոց օգնություն - 1240.0 հազ. դրամ
5. Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում - 5695.0 հազ. դրամ
6. պոմպերի վերանորոգում - 1350.0 հազ. դրամ
7. ջրագծերի կապիտալ վերանորոգում - 555.0 հազ. դրամ

Համայնքի առջև ծառայած հիմնական խնդիրները:

1. Կուլտուրայի տան հիմնանորոգում
2. Սանկապարտեզի շենքի հիմնանորոգում
3. Հայրենական Մեծ պատերազմի զոհվածների հուշարձանի վերանորոգում
4. Խմելու ջրագծերի խողովակաշարերի վերանորոգում
5. Գազաֆիկացում / շարունակական /
6. Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում և ավազապատում

Ջանֆիդա համայնքի ղեկավար՝



Է. Մանուկյան

11.07.2012 թվական
գ. Ջանֆիդա